«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ 06 փետրվարի 2020 թ.
ք.Երևան, Արշակունյաց 44 ժամը 16:00

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սաֆարյան
անդամներ՝ Ա.Գրիգորյան
Ա.Մարգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝Ս.Ավագյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված
Հայտերի գնահատման մասին

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սաֆարյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով մրցույթի կազմակերպված միաժամանակյա բանակցությունների մասին,
3. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին:

2. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով մրցույթի կազմակերպված միաժամանակյա բանակցությունների մասին

Ընդունել ի գիտություն որ՝

2.1Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» կետի պահանջներով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված մասնակցին էլեկտրոնային ձևով ծանուցել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:
2.2 Բանակցությունների նիստը նշանակվել էր սույն թվականի փետրվարի 06-ին ժամը 16^{00}-ին, ք.Երևան, Արշակունյաց 44 հասցեում:
2.3Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը՝ 06.02.2020թ. ժամը 16^{00}-ը, միաժամանակյա բանակցություններին մասնակցել է «ՍՊՌՈՒՏ» ՍՊԸ -ն:
2.4Կազմակերպված բանակցությունների արդյունքում «ՍՊՌՈՒՏ» ՍՊԸ-ն գնային առաջարկը թողեց անփոփոխ:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

3. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով մրցույթի նիստի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման մասին

3.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները գնահատող հանձնաժողովը որոշեց.
ա/ 1-ին չափաբաժնի համար ընտրված մասնակից ճանաչել «ՍՊՌՈՒՏ» ՍՊԸ -ին :

3.2 Ծանուցել ընտրված մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով և պայմանագրի ապահովում՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով :

3.3 Ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով և 36-րդ հոդվածով սահմանված կարգով:

3.4Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության մասին տեքստը:
Ընդունվել է որոշում ՝ կողմ 3(երեք), դեմ 0 (զրո)

Հանձնաժողովի՝

նախագահ՝ _____ Ա. Սաֆարյան

անդամներ՝ _____ Ա.Գրիգորյան

_____ Ա.Մարգարյան

քարտուղար՝ _____ Ս.Ավագյան